



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:
LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE
NEW YORK 16, N. Y.

Թիւ 1397
Դեկտեմբեր 18, 1956

Արժանաշնորհ
Տ. Առնակ ԲՀՆԵՅ. Գասպարեան
Նախագահ Մխական Խորհուրդի
Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ
Տիթրոյթ.

Սիրելի Տէր Առնակ,

Այսու ներփակ Ձեզի կը ղրկենք Մխական տեղեկագրութեան ձեւերէն երկու օրինակ: Կը յանձնարարենք որ Ձեր Մխական ժողովին գումարումէն անմիջապէս ետքը այս տեղեկագիրը անթերի կերպով լեցնելով մէկ օրինակը իսկոյն ղրկէք Առաջնորդարանս, իսկ միւս օրինակը պահէք Ձեր թղթածրարին մէջ:

Տեղեկագրին պէտք է կցել նաեւ ընտրութեանց արդիւնքը Հաստատող թուղթ մը, ուր նշանակուած ըլլալ թէ քանի անդամներ մասնակցած են ժողովին եւ իւրաքանչիւր ընտրեալ քանի քուէ ստացած է: Տեղեկագիրը պէտք է ստորագրած ըլլան Մխական ժողովի նախագահը, ատենապետն ու ատենադպիրը, նոյն պէս նաեւ հովիւն ու Մխական Խորհուրդի ղեւանի ատենապետն ու ատենադպիրը:

Տեղեկագրին պէտք է որ կցուած ըլլալ նաեւ Մխական Խորհուրդի եւ ենթակալ մարմիններու տարեկան գործունէութեանց ամփոփ տեղեկագիրը որպէսզի կարելի ըլլալ զայն հրատարակել "Հայաստանեայց Եկեղեցի" պաշտօնաթերթին մէջ հերթական կարգով:

Հաճեցէք կարեւորութեամբ գործադրել սոյն հրահանգները:

Մնամք ողջունիւ սիրոյ
Աղօթարար

ՄԱՄԱՐԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի



St. John's Armenian Church

ՍԲ. ՅՈՎՀ. ՄԿՐՏԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ

REV. ARNAK KASPIAN, PASTOR
REV. DIRAN PAPAIZIAN, ASSOCIATE PASTOR

1335 OAKMAN BOULEVARD

TOWNSEND 5-2500

DETROIT 38, MICHIGAN

Փետրվար 28, 1961

Գերաշնորհ
Տ.Սիոն Արք. Մանուկեան
Նախագահ Թեմական Խորհուրդի
Նիւ Եորք, Նիւ Եորք

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Եկեղեցւոյ Տարեկան Անտրական Ժողովը գումարուեցաւ փետրվար 26, 1961ին 248 իրաւասու անդամներու մասնակցութեամբ: Կը նախագահէր Հովիւը, Տ.Առնակ Քհ. Գասպարեան: Օրուան դիւանը ընտրուեցաւ հետեւեալ կերպով. ատենապետ Պր. Եղուարդ Մարտիկեան, ատենադպիր Պր. Ներսէս Ներսէսեան:

Ներկակ կը ներկայացնենք Միական Խորհուրդի եւ բոլոր օժանդակ մարմիններու տարեկան գործունէութեանց տեղեկագիրները: Անտրութիւնները եղան հետեւեալ կերպով. Միական Խորհուրդի համար երկու տարուան շրջանով ընտրուեցան 5 հոգի. Մարթին Մանուկեան 147 քուէ, Մարթին Աբգարեան 123 քուէ, Հայկազ Եղուպեան 141 քուէ, Ճէք Սմսարեան 102 քուէ, Խաչիկ Սէմիզեան 119 քուէ: Իսկ հաշուեքնիչ Յանձնախումբի անդամ ընտրուեցան. Հէրի Քէօլէեան 157 քուէ, ձան Պահատուրեան 157 քուէ եւ Բիչըրտ Սիմոնեան 101 քուէ:

Որոշուեցաւ տարետուրքի կերպը բոլորովին շնջել եւ միայն ունենալ Խոստումի դրութիւնը: Որոշուեցաւ տարեկան նուազագոյն 10 տուարի տուրքը վերածել նուազագոյն 15 տուարի: Որոշուեցաւ առաջարկ տանիլ Պատգամաւորական Ժողովին որ փոխանակ իւրաքանչիւր անդամի համար 7 տուար Թեմական տուրքի, այդ տուրքը ըլլայ եկամուտին յարաբերաբար, առ հարիւրի սկզբունքով: Ներկայացուած պիւտճէն նոյնութեամբ ընդունուեցաւ:

Կը խնդրենք վերոյիշեալ ընտրութեանց վաւերացումը Ձերը Սրբազանութենէն:

Ի դիմաց Տիթրոյթի Միական Ժողովին

Arnak Kaspiyan

Առնակ Քհ. Գասպարեան, Նախագահ

Եղուարդ Մարտիկեան, Ատենապետ
Ներսէս Ներսէսեան, Ատենադպիր



St. John's Armenian Church

ՍԲ. ՅՈՎՀ. ՄԿՐՏԻԶ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ

REV. ARNAK KASPARIAN, PASTOR
REV. DIRAN PAPAZIAN, ASSOCIATE PASTOR

1335 OAKMAN BOULEVARD



TOWNSEND 5-2500



DETROIT 38, MICHIGAN

Փետրվար 28, 1961

Գերաշնորհ
Տ. Միոն Արք. Մանուկեան
Նախագահ Թեմական Խորհուրդի
Նիւ Եորք, Նիւ Եորք

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Մեր նախագահութեան տակ նորակազմ Ծխական Խորհուրդը ընտրեց իր ղեկանը հետեւեալ կերպով.

Մարթին Աբգարեան, Ատենապետ
Եղուարդ Գօրքօեան, Փոխ ատենապետ
Ճէք Սմսարեան, Ատենադպիր
Ջարլզ Սթամպուլեան, Գանձապահ
Ճորճ Մաշլազեան
Մարթին Մանուկեան
Արամայիս Կարապետեան
Հայրապետ Միքայէլեան
Հայկազ Եաղուպեան
Տրկլըս Տաքէսեան
Խաչիկ Սէմիզեան

Կը խնդրենք վաւերացումը եւ Ձեր Սրբազանութեան օրհնութիւնները մեր Ծխական Խորհուրդի այս նոր կազմին: Նոր ղեկանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը կուտանք ստորեւ:

Խոնարհաբար մատչելով ի համբոյր
ձեր ս.աջոյն

Mr. Martin Apkarian
Mr. Edward Korkoian
Mr. Jack Simsarian
Mr. Charles Stamboulion

1 Oxford Rd., Pleasant Ridge, Mich. LI.3-3143
1254 Porter, Dearborn, Mich. LO.3-0244
16884 Stansbury Detroit, Mich. VE.7-8047
16530 Sussex Detroit, Mich. VE.7-2007



St. John's Armenian Church

ՍԲ. ՅՈՎՀ. ՄԿՐՏԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ

REV. DIRAN PAPAŽIAN, PASTOR

22001 NORTHWESTERN HIGHWAY



PHONE 356-1910



SOUTHFIELD, MICHIGAN

10 Մարտ, 1962

Գեր. Տ. Սիոն Արք. Մանուկեան,
Առաջնորդ Հայոց Ամերիկայի,
Որ ի նիւ-եորկ, Ն.-Ե.

Սիրելի Արքազան Հայր,
Սոյն պաշտօնագրով կը փափաքիմ Արքազանութեանը վաւերացումը եւ օրհնութիւնը խնդրել Եկեղեցւոյս նորընտիր Միական Խորհուրդին, 1962 տարուոյ պաշտօնավարութեան համար:

Մեր Միական Ընդհանուր Անդամական Ժողովը տեղի ունեցաւ 16 փետրուար, 1962-ին, Ուրբաթ գիշեր ժամը 8,00-ին, նորակառոյց եկեղեցւոյս սրահին մէջ ի Սաուրիտ, Միշիկան:

Սոյն ժողովին դիւանը կազմուած էր ըստ հետեւեալին: Օրուան Ատենապետ ընտրուեցաւ Դանիէլ Շահան, իսկ Ատենադպիր ներսէս ներսէսեան: Ժողովը նուաստիս նախագահութեան տակ էր:

Ընտրողական Յանձնախումբին բերած յանձնարարութեան համաձայն եւ ներկայացուած երկպատիկ ցանկին վրայէն, քուէարկութիւնը տուաւ հետեւեալ արդիւնքը:

Հայրապետ Միքայէլեան, իբրեւ Միական Խորհուրդի անդամ, իր աւելի քան 14 տարիներու անընդհատ եկեղեցւոյս բերած բարօք եւ հաւատարիմ ծառայութեան համար, ընտրուեցաւ ներկաներու ձայնով, ցկեանս «ատուոյ Անդամ Միական Խորհուրդի: Ասիկա երկրորդ անձն է որ կընտրուի Պատուոյ Անդամ Միական Խորհուրդի, առաջինը ըլլալով Պետրոս Մանուկեան որու ընտրութիւնը եղած է, եթէ չեմ սխալիր 1956-ին:

163 քուէարկողներու մասնակցութեամբ, քուէից առաւելութեամբ, Միական Խորհուրդիս վեց դադարեալ անդամներու փոխարինութիւնը տուած է հետեւեալ արդիւնքը, որը ցոյց կուտայ թէ անոնցմէ ոմանց ընտրութիւնը իրականին մէջ վերընտրութիւն է, իսկ այլոց առաջին անգամ ըլլալով ընտրութիւն մը:

Հետեւեալ վեց անձերը ընտրուողներն են,-
Արամայիս Կարապետեան, Եղուարդ Գորգոեան, Ճորճ Մաշլազեան, Տաքէս Տաքէսեան, Հէրի Գրզըլեան եւ Միհրան Հօփլամազեան:

Ի գիտութիւն աւելցնենք որ առաջին չորսինը վերընտրութիւն է, իսկ վերջին երկուքինը առաջին անգամ ըլլալով եղած ընտրութիւն:

Իբրեւ յաւելեալ տեղեկութիւն աւելցնենք որ Միական Խորհուրդի Ընտրութեան հետ միատեղ ունեցանք նաեւ, ընտրութիւնը, վերոյիշեալ պարագաներով, եկեղեցւոյս վերստուգիչ կամ հաշուեքննիչ Յանձնախումբին ընտրութիւնը, ըստ հետեւեալին,-

Հետեւեալ երեք անձերը ընտրուեցան,-



St. John's Armenian Church

ՍԲ. ՅՈՎՀ. ՄԿՐՏԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ

REV. DIRAN PAPAŽIAN. PASTOR

22001 NORTHWESTERN HIGHWAY



PHONE 356-1910



SOUTHFIELD, MICHIGAN

ձան Պահատուրեան, Րիչարտ Սիմոնեան եւ Ալպէրթ Սիմոնեան:

Առաջին երկուքինը վերը նորոգութիւն է, իսկ վերջինը առաջին անգամ ըլլալով կը նորոգուի:

Նորընտիր Միսական Խորհուրդը փետրուար 27-ին, 1962, իր լիակատար նիստին մէջ առաջին առթիւ կազմեց իր նոր դիւանը եւ ըստ այսմ 1962 տարուոյ Միսական Խորհուրդի անձնակազմը կը ներկայանայ ըստ հետեւեալին, համաձայն պաշտօններուն:

1, - Պետրոս	Մանուկեան	Պատուոյ Անդամ
2, - Հայրապետ	Միքայէլեան	Պատուոյ Անդամ
3, - Մարտիրոս	Աբգարեան	Ատենապետ
4, - Եղուարդ	Գորգոնեան	Ատենադպիր
5, - Միհրան	Հօփլամազեան	Գանձապետ
6, - Խաչիկ	Սէմիզեան	Փ-Ա. պետ
Արամայիս	Կարապետեան	
Արամայիս	Կարապետեան	Փ-Ա. դպիր
7, - Ճէք	Սիմսարեան	Փ-Գանձապետ
8, - Արամայիս	Կարապետեան	Խորհրդական
9, - Ճորճ	Մաշլազեան	
Տաքէս	Տաքէսեան	
10, Տաքէս	Տաքէսեան	, ,
11, Մարտիրոս	Մանուկեան	, ,
12, Հայկազ	Եղուպեան	, ,
13, Հէրի	Գրգըլեան	, ,

Սրբազան Հայր, նկատելով որ սոյն ընտրութեան վրայէն բաւականաչափ ժամանակ սահաճ է արդէն, եւ նկատելով նաեւ որ սոյն ազգայինները ճանչցուած յարգելի անձնաւորութիւններ են, եւ ձեզի ալ անձնապէս ծանօթ, շատ պիտի խնդրէի ձեզմէ որ անոնց վաւերացումը փութացնէիք մինչեւ Չորեքշաբթի օր, 21 Մարտ, երբ Միսական Խորհուրդիս հերթական ժողովը տեղի կունենայ, որպէսզի նոյն օրը ժողովին ներկայացնէի իրենց վաւերացումը եւ ապա Կիրակի օրը, 25 Մարտին կատարէինք անոնց ուխտառութեան արարողութիւնը: Կը ներէք որ այս նախկը բաւականին ուշացաւ, նորընտիր Միսական Խորհուրդին վաւերացման պաշտօնագիրը խնդրելու համար ձեզմէ:

Շուտով Առաջնորդարան կը փութացուին նաեւ մեր Տարեկան Տեղեկագիրը եւ այլ մանրամասնութիւններ որոնք կապ ունին մեր Տարեկան ժողովին հետ:

Համբուրիւ ձեր Ս. Աջոյն,
Մնամ խոնարհ Աղօթակից,

Diran Papazian

S. Տիրան Քհնյ. ֆափագեան, ՀՈՎԻԻ



23 Մարտ, 1963

Սրբազան Հայր,
Մեր Մխական Ընտրութեանց կապակցութեամբ կուզեմ
լուսաբանուիլ հետեւեալ կէտին շուրջ:

Ըստ մեր Թեմական Կանոնադրութեան 18-րդ յօդուածին,
ընտրութիւնները օրինաւոր կը համարուին
ներկայ քուէարկողներու թիւին մեծամասնութեան
քուէով:

Սակայն կուզեմ հասկնալ ՚ի՛նչ կը նշանակէ սոյն
մեծամասնութիւն բառը: Քուէներու պարզ առա-
ւելութիւն կը նշանակէ թէ հարկ է որ ընտրուողը
նուազագոյն ներկայ քուէարկուներու թիւին կէսէն
1-մէկ աւելի ստանալու է գոնէ: Ինձ այնպէս կը
թուի թէ յօդուածին տրամադրութիւնը անորոշ է եւ
թէ յստակ մեկնաբանութեան կը կարօտի:

Մեր Մխական Ժողովին քուէարկուներու ընդհանուր
թիւն էր 206, սակայն Մխական Խորհուրդի անդամակ-
ցութեան համար ընտրուողներէն մին ստացած է մի-
այն 95 քուէ, եթէ ներկայ քուէարկուներու թիւին
կէսէն մէկ աւելի ըլլալու է ստացուած քուէներու
նուազագոյն թիւը, ներկայ պարագային այդ թիւը
ըլլալու է 104 եւ ըստ այդմ սոյն պարոնին ընտ-
րութիւնը խնդրոյ առարկայ կը դառնայ: Կը փափա-
քիմ որ զիս լուսաբանէք այս ուղղութեամբ, վասն
զի յօդուածին տրամադրութիւնը անորոշ է:

Ներկայ պարագային համար սակայն, պիտի խնդրէի
որ հարց մը չի յարուցուէր եւ կանխարգելու համար
հաւանական ղեկուարութիւններ վաւեռացնէիք սոյն
ընտրութիւնը եղածին պէս: Այս մասին լուսաբան-
ուելու փափաքս ապագային համար է պարզապէս:

Մնամ Խոնարհ Աղօթակից,

S. Տիրան Բհնյ.



24 Մարտ, 1963

Գեր, Տ. Սիրոն Արք. Մանուկեան,
Առաջնորդ Հայոց Ամերիկայի,
ի նիւ Եորկ, Ն.-Ե,

Սրբազան Հայր,
Հայաստանեայց Եկեղեցւոյ Եպիսկոպոսական դասէն
Անթիլիիասի Աթոռակալին Ջարեհ Եպիսկոպոսին վախ-
ճանումին առթիւ, Հոգեհանգստեան համար ցարդ ուր-
եւէ հրահանգ չստացանք Առաջնորդարանէն, հակառակ
անոր որ Հոգեհանգստեան պաշտօն կատարուած է մեր
նուիրապետական բարձրագոյն Աթոռէն ներս, էջմի-
ածնայ Տաճարին մէջ:

Կը փափաքիմ ունենալ ձեր տեսակէտը այս մասին:

Խոնարհ Աղօթակից,

Տ. Տիրան Ահնյ. Փափազեան



St. John's Armenian Church of Greater Detroit

ՍԲ. ՅՈՎԸ. ՄԿՐՏԻՉ ԶԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ

REV. DIRAN PAPAŽIAN, PASTOR

22001 NORTHWESTERN HIGHWAY



PHONE 356-1910



SOUTHFIELD, MICHIGAN

23 Մարտ, 1963

Գեր. Տ. Սիոն Սրբ. Արք. Մանուկեան,
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
ի նիւ Եորկ, Ն.Ե.

Գեր. Սրբազան Հայր,
Մեծագոյն Տիօրոյթի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ Տարեկան Ծխական
Անդամական Ժողովը գումարուեցաւ Ուրբաթ 15 Մարտ, 1963-ին, ժամը զի-
շերուան 8,30-ին, Եկեղեցւոյս նորակառոյց սրահին մէջ, ի Սառնափնիկ,
Միշիկան, նախագահութեամբ Հովուին՝ Տէր Տիրան Բհնյ. ի եւ Ատենապետու-
թեամբ Դանիէլ Սարգսեան Ծահանի եւ Բարտուղարութեամբ Արշաւիր Եղիսեանի
որոնք սոյն ժողովին մէջ ձեռամբարձ քուէով եւ քուէներու առաւելու-
թեամբ ընտրուած էին իրենց վերոյիշեալ պաշտօններուն:

Սոյն Ծխական Ժողովի Ատենապետութիւնը եւ յարակից ամբողջական մանրա-
մասնութիւնները հաճեցէք գտնել զատ պահարանի մը մէջ, Եկեղեցւոյս Տա-
րեկան Տեղեկագրութեան պաշտօնական Թղթին հետ միասին, որոնք բոլորն ալ
ի մօտոյ պիտի ճամբուին ձեր Սրբազնութեան:

Մինչ այդ սակայն, ներկայիւս կը փափաքինք Ծխական Խորհուրդի ղաղարեալ
վեց -6- անդամներու փոխարէն նորընտիր անդամներու ընտրութեան արդիւնքը
հաղորդել ձեզի, խնդրելով ձեզմէ որ վաւերացնէք անոնց ընտրութիւնը:
Ի բաց առեալ Ծխական Խորհուրդի մասնակի ընտրութեան, ընտրութիւն կայա-
ցաւ նաեւ Թեմական Պատգամաւորներու հինգ -5- հոգինոց անձնակազմին եւ
վերստուգիչ Յանձնախումբի երեք -3- հոգինոց կազմին, որոնց վերաբերմամբ
ստորեւ կը ներկայացնեմ արդիւնքը, անդրադառնալով նախ եւ առաջ Ծխական
Խորհուրդի ընտրութեան:

Քուէարկութեան մասնակցող տրատու եւ իրաւասու անդամներէն ընդամէն 206
հոգի քուէարկութեան իրենց իրաւունքը կիրարկեցին թեկնածուներու երկպա-
տիկ ցանկի մը վրայէն որ ի յառաջագունէ պատրաստուած եւ ներկայացուած
էր երեք -3- հոգինոց ընտրական Յանձնախումբի մը կողմէն որ իր կարգին
ընտրուած էր Եկեղեցւոյս նախապատրաստական Ժողովին մէջ որ կայացած էր
մեր նախագահութեամբ Կիրակի 11 Նոյեմբերին (1962) Եկեղեցւոյ մէջ, յա-
ւարտ պաշտամունքին:

Քուէներու առաւելութեամբ հետեւեալ վեց -6- ազգայինները ընտրուեցան
Ծխական Խորհուրդի 1963 տարւոյ նստաշրջանին անոք անդամ, Տիրաք Մարթին
Աբգարեան 151 քուէով, Խաչիկ Սէմիգեան 151 քուէով, Մարթին Մանուկեան
130 քուէով, Եղուարդ Ենդուպեան 121 քուէով, Վահէ Բաբէլեան 111 քուէով
եւ Յարութիւն Զարդարեան 95 քուէով: Ասոնցմէ առաջին չորսինը իրականին
մէջ վերընտրութիւն է:

Աւելցնենք որ Ծխական Խորհուրդի նորընտիր կազմը իր լիակատար առաջին
նիստին մէջ ընտրեց իր նորակազմ ղեւանը, ըստ հետեւեալին, -
Մարթին Աբգարեան՝ Ատենապետ
Խաչիկ Սէմիգեան՝ Ատենապետ
Յարութիւն Զարդարեան՝ Ատենապետ
Հէիր Գզըլեան՝ Փոխ-Ատենապետ
Գանձապահ

Ծխական խորհուրդի մնացեալ հինգ -5- անդամներն են հետեւեալները
որոնք կը հասցնեն անդամներու թիւը 11-ի,-

Պարոնայք Միհրան Հօփլամազեան, Արամայիս Կարապետեան, Ճորճ Մաշլագ-
ճիեան, Եղուարդ Գորգոյեան եւ Հէրի Գրզըլեան: Ասոնցմէ զատ ունինք նա-
եւ զոյգ մը Պատուոյ Անդամներ Տիարք Հայրապետ Միքայէլեան եւ Պետրոս
Մանուկեան:

Իսկ իբրեւ յաուելուածական տեղեկութիւն, ինչպէս վերեւ յիշած էինք,
կայացաւ նաեւ թեկնածուներու երկպատիկ ցանկի մը վրայէն ընտրութիւնները
թեմական Պատգամաւորաց հինգ -5- հոգինոց անձնակազմին եւ Վերստուգիչ
յանձնախումբի 3 հոգինոց կազմին:

Քուէներու առաւելութեամբ մեր նոր թեմական Պատգամաւորները կը ներ-
կայանան հետեւեալները, որոնք յիշուած են քուէներու առաւելութեան կար-
գով,-

Տիարք Եղուարդ Մարտիկեան, Մարթին Աբգարեան, Եղուարդ Գորգոյեան,
Դանիէլ Սարկաւազ Շահան եւ Արա Ա. Սարկ. Հայկ:

Իսկ Վերստուգիչ Յանձնախումբի անդամներն են, դարձեալ քուէներու
առաւելութեան կարգով յիշուած,-

Տիարք Բիչըրտ Սիմոնեան, Ալպէրթ Մարտիրոսեան եւ Ալպէրթ Սիմոնեան:

Սոյն հաստատագիրը խոնարհաբար կը ներկայացնենք ձերը Սրբազնութեան
եւ ակնդէտ կսպասենք ձեր վաւերացման պաշտօնագրին եւ օրհնութեան, որ-
պէս զի Ծխական խորհուրդի նոր կազմը ունենայ շուտով իր ընծայման արարո-
ղութիւնը եւ ապա լծուի իր եկեղեցանուէր գործին պաշտօնապէս:

Մտաչելով ի համբոյր ձեր Ս. Աջոյն,
մնամ խոնարհ Աղօթակից,

Տ. Տիրան ԲՀՆԵՅ, Փափագեան
Հովիւ եւ Նախագահ

Ծխական Անդամական Ընդհանուր Ժողովոյ



229 C

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 • 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 28891
Փետրուար 28, 1978

Հոգեշնորհ
Տ. Փառէն Վրդ. Աւետիքեան
Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Սկեղեցւոյ
Նախագահ ծիսական Խորհուրդի
Ստուգֆիլտ.

Սիրելի Հայր Փառէն,

Ստացած ենք 1978 Փետրուար 18 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը
հաղորդէք թէ 2եր նախագահութեամբ Փետրուար 9ին գումարուած համայնքիդ
ծիսական փողովին մէջ կատարուած է ծիսական Խորհուրդի հինգ անդամոց ըն-
տրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կրիւնդրէք ըն-
տրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ 2եր ծիսական փողովը տեղի ունեցած է Թեմական
Կանոնադրութեան արամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք ծիսական
Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ արուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծիսական Խորհուրդի նորընտիր
Գիւանի անդամոց անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով ծիսական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք 2եզի եւ 2եր
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի
պայծառութիւն Ս.Սկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Արթր Մարտիկեան
Մարիցա Նիկողոսեան
Ճան Նորաեան
Անուշ Բաբէլեան
Գարլ Վարատեան

Թիւ 24500
Մարտ 14, 1974

Հոգեշնորհ
Տ. Փառէն Վրդ. Աւետիբեան
Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ
Նախագահ Ժիական Խորհուրդի
Տիթրոյթ,

Սիրելի Հայր Փառէն,

Ստացած ենք Մարտ 10, 1975 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ Փետրուար 21ին գումարուած համայնքիդ ծիական ժողովին մէջ կատարուած է ծիական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով բուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ծիական ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք ծիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծիական Խորհուրդի նորընտիր Դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Ռիչըրտ Արզարեան
Մերի Անն Գարագաշեան
Արթըր Մարտիկեան
Սուրէն Զէօլէյեան
Անուշ Բարէլեան

Թիւ 24249
Փետր. 12, 1974

Հոգեշնորհ
Տ. Փառէն Վրդ. Աւետիքեան
Հովիւ Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցւոյ
Նախագահ Ժիական Խորհուրդի
Տիթրոյթ.

Սիրելի Հայր Փառէն,

Ստացած ենք Փետրուար 6, 1974 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ Փետրուար 1ին գումարուած համայնքի ժիական ժողովին մէջ կատարուած է ժիական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժիական ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք ժիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել ժիական Խորհուրդի նորընտիր Դիւանի անդամոց եւ Եկեղեցւոյ ընթացակայ մարմիններու վարչութեանց ատենապետներու անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքի մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Սուրէն Աբրահամեան
Ստեփան Պոյանեան
Արմէն Յովնանեան
Բիչըրտ Նորսիկեան
Հերրի Թէրզեան
Լիօ Ջամանիկեան